Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 4-ի N 1360 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են 2013 թվականի հունիսի 25-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին պայմանագրի կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Ռազմական նշանակություն ունեցող արտադրանքը Ռուսաստանի Դաշնությունից ներմուծվում է Հայաստանի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն է արտահանվում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված են իրականացնելու Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի պատվերները, ու այն իրավաբանական անձանց կողմից, որոնք ունեն ռազմական նշանակություն ունեցող արտադրանք ներմուծելու և արտահանելու, տարանցիկ փոխադրում ու առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու համար լիցենզիա (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններ և լիազորված կազմակերպություններ):

3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և այն լիազորված կազմակերպությունները, որոնք շահագրգռված են Ռուսաստանի Դաշնությունից ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի ձեռքբերմամբ (այսուհետ՝ հայտատու), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն են ուղարկում N 1 ձևով սահմանված հայտեր՝ նշված արտադրանքի ձեռքբերման անհրաժեշտության հիմնավորմամբ:

4. Հայտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, համաձայն N 2 ձևի, մեկամսյա ժամկետում կազմում է Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի անվանացանկը: Այն դեպքում, երբ անվանացանկում նշված որոշակի արտադրանքի արտադրական հնարավորությունների լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն է առաջանում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն անվանացանկը կազմելուց հետո 10-օրյա ժամկետում անվանացանկում նշված արտադրանքի այդ մասն ուղարկում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն՝ կից ներկայացնելով համապատասխան արտադրանքի բնութագրերը: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն անվանացանկն ստանալու պահից 14-օրյա ժամկետում ուսումնասիրում է դրանում նշված կազմակերպությունների կողմից համապատասխան արտադրանքի արտադրական հնարավորությունները՝ հաշվի առնելով տեխնիկական հագեցվածությունը, համապատասխան որակյալ կադրերի ու պահեստների առկայությունը և այլն: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից առարկություններ ներկայացվելու դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը դրանց հիման վրա լրամշակում է անվանացանկը, իսկ առարկությունների բացակայության դեպքում այն վերադարձվում է Հայաստանի Հանրապետության

պաշտպանության նախարարություն: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից սույն կետով սահմանված ժամկետում պատասխան չստացվելու դեպքում անվանացանկը համարվում է համաձայնեցված: Անվանացանկի համաձայնեցումից հետո 15-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը հաստատման նպատակով այն ուղարկում է Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմին: Այն դեպքերում, երբ անվանացանկում նշված արտադրանքի արտադրական հնարավորությունների լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն չի առաջանում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը 15-օրյա ժամկետում հաստատման նպատակով այն ուղարկում է Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմին:

5. Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմնի կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծման համար նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի անվանացանկի հաստատման մասին գրավոր ծանուցում ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը հայտատուներից յուրաքանչյուրին իրեն վերաբերող մասով ուղարկում է քաղվածք՝ համաձայն N 4 ձևի:

6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմնից ստանալով ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի անվանացանկը, որում նշված արտադրանքի ձեռքբերմամբ շահագրգռված են Ռուսաստանի Դաշնության լիազորված կազմակերպությունները, 10-օրյա ժամկետում հարցում է ուղարկում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններ և լիազորված կազմակերպություններ՝ պարզելու նրանց կողմից այդ արտադրանքի մատակարարման հնարավորության հարցը: Նշված կազմակերպությունների պատասխանների հիման վրա Հայաստանի Հանրապետության պաշտպանության

նախարարությունը, համաձայն N 3 ձևի, մեկամսյա ժամկետում կազմում է Հայաստանի Հանրապետությունից արտահանման համար նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի անվանացանկը: Այն դեպքում, երբ անվանացանկում նշված որոշակի արտադրանքի արտադրական հնարավորությունների լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն է առաջանում, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն անվանացանկը կազմելուց հետո 10-օրյա ժամկետում անվանացանկի արտադրանքի այդ մասն ուղարկում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն՝ կից ներկայացնելով համապատասխան արտադրանքի բնութագրերը: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն անվանացանկն ստանալու պահից 14-օրյա ժամկետում ուսումնասիրում է դրանում նշված կազմակերպությունների կողմից համապատասխան արտադրանքի արտադրական հնարավորությունները՝ հաշվի առնելով տեխնիկական հագեցվածությունը, համապատասխան որակյալ կադրերի ու պահեստների առկայությունը և այլն: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից առարկություններ ներկայացվելու դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը դրանց հիման վրա լրամշակում է անվանացանկը, իսկ առարկությունների բացակայության դեպքում այն վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն: Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից սույն կետով սահմանված ժամկետում պատասխան չստացվելու դեպքում անվանացանկը համարվում է համաձայնեցված:

7. Այն դեպքում, երբ Ռուսաստանի Դաշնության կողմից ներկայացված անվանացանկում նշված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքը համընկնում է շրջանառության հսկողության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարմանը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության

նախարարությունը Հայաստանի Հանրապետությունից արտահանման համար նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի անվանացանկը կազմելուց հետո 10-օրյա ժամկետում համաձայնեցման նպատակով այն ուղարկում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից առարկություններ ներկայացվելու դեպքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը դրանց հիման վրա լրամշակում է անվանացանկը, իսկ առարկությունների բացակայության դեպքում այն վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից 10-օրյա ժամկետում պատասխան չստացվելու դեպքում անվանացանկը համարվում է համաձայնեցված:

8. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը հաստատում է Ռուսաստանի Դաշնություն արտահանելու նպատակով նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի անվանացանկը, դրա մասին գրավոր տեղեկացնում է Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմնին և նշված անվանացանկից՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններից և լիազորված կազմակերպություններից յուրաքանչյուրին իրեն վերաբերող մասով ուղարկում է քաղվածքներ՝ համաձայն N 4 ձևի:

9. Հայաստանի Հանրապետություն ներմուծելու (Հայաստանի Հանրապետությունից արտահանելու) համար նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի հաստատված անվանացանկերը գրանցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմում և ստորագրվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից:

10. Հայաստանի Հանրապետություն ներմուծելու (Հայաստանի Հանրապետությունից արտահանելու) համար նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի ստացված անվանացանկերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և լիազորված կազմակերպությունները Ռուսաստանի Դաշնության լիազորված կազմակերպությունների հետ կնքում են պայմանագրեր:

11. Կնքվող պայմանագրերում պետք է սահմանվեն դրույթներ, որոնք վերաբերում են իրավական պաշտպանության և Հայաստանի Հանրապետության իրավասությանը պատկանող ու Հայաստանի Հանրապետությունից արտահանման համար նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի մաս կազմող ռազմական նշանակության գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական և տեխնիկական աշխատանքների (այսուհետ՝ մտավոր գործունեության արդյունքներ) օգտագործման պայմանների ապահովմանը:

12. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և լիազորված կազմակերպությունները պայմանագրերն ստորագրելուց հետո 10-օրյա ժամկետում հաշվառման նպատակով դրանց պատճեններն ուղարկում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

13. Ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման (Հայաստանի Հանրապետությունից արտահանման) համար նախատեսված գրանցված պայմանագրերը հիմք են սահմանված կարգով համապա-

տասխան տարվա պաշտպանական պատվերի ներմուծման-արտահանման մասում ընդգրկվելու համար:

14. Ռուսաստանի Դաշնության տարածքում հատուկ նշանակության օբյեկտների ստեղծման հարցում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների և լիազորված կազմակերպությունների կողմից տեխնիկական աջակցության ցուցաբերումը, ինչպես նաև գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների անցկացումը յուրաքանչյուր առանձին դեպքի համար հաստատվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից՝ ստանալով Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի համաձայնությունը:

15. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններին հատկացված բյուջետային միջոցների օգտագործմամբ կամ հատուկ պայմաններով հաշվարկների կիրառմամբ (մուծումների տարկետում, ներառնտրային բարտերային գործարք և այլն) ռազմական նշանակություն ունեցող արտադրանքը Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն արտահանվում, ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի անվանացանկում ընդգրկված և օտարերկրյա պատվիրատուներին փոխանցելու համար թույլատրված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի արդիականացման համար նախատեսված գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքներն անցկացվում, Ռուսաստանի Դաշնության տարածքում ստեղծված հատուկ օբյեկտների սարքերը համալրվում ու արդիականացվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի կողմից հաստատված անվանացանկերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա:

16. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և լիազորված կազմակերպությունները հաշվետու ժամանակահատվածին հաջորդող յուրա-

քանչյուր եռամսյակի մինչև ամսի 5-ը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը տրամադրում են N 5 ձևով սահմանված հաշվետվություն:

17. Այն դեպքում, երբ ներկայացված փաստաթղթերը կազմված չեն NN 1, 2, 3, 4 և 5 ձևերին համապատասխան, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն այդ փաստաթղթերն ստանալու պահից 10-օրյա ժամկետում վերադարձնում է՝ մատնանշելով դրանցում առկա թերությունները: Փաստաթղթերը վերադարձվելուց հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինները և լիազորված կազմակերպությունները շտկում են դրանք և ներկայացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն:

18. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը Հայաստանի Հանրապետություն ներմուծելու (Հայաստանի Հանրապետությունից արտահանելու) համար նախատեսված՝ ռազմական նշանակություն ունեցող արտադրանքի անվանացանկերը հաստատվելուց հետո դրանց պատճենները երկամսյա ժամկետում ուղարկում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, իսկ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման այլ մարմիններ՝ միայն համապատասխան գրավոր հարցման դեպքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

Հ Ա Յ Տ

_____

(Հայաստանի Հանրապետության լիազորված կազմակերպության անվանումը)

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ՝ 20___ ԹՎԱԿԱՆԻՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ

Մատա-կարարը	Արտադրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Չափի միավորը	Քանակը	Ձեռքբերման նպատակը	Լիցենզիայի առկայությունը հաստատող փաստաթղթի համարը

Հայաստանի Հանրապետության
լիազորված կազմակերպության
ղեկավար

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

___ _____ 20 թ.

Ձև N 2

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի Ն ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ

N _____ 20___ թվական

Հայտատուն	Արտադրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Չափի միավորը	Քանակը	Ձեռքբերման նպատակը

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարար

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 3

«Հաստատում եմ»
Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարար

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

___ _____ 20 թ.

Կ.Տ.

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ-ԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ

N _____ 20___ թվական

Մատակարարը	Արտադրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Չափի միավորը	Քանակը	Ձեռքբերման նպատակը

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարության
կառուցվածքային ստորաբաժանման
ղեկավար

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

Ձև N 4

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ (ԱՐՏԱՀԱՆՄԱՆ) ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻՑ

N _____ 20___ թվական

Գրանցման համարը _____

Տրված է ___ _____ 20 թ.

Հայաստանի Հանրապետության լիազորված կազմակերպություն (հայտատու, մատակարար)

_____

(անվանումը)

Ռուսաստանի Դաշնության լիազորված կազմակերպություն (հայտատու, մատակարար)

_____

(ամբողջական անվանումը)

Պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը	Արտադրանքի անվանումը	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Չափի միավորը	Քանակը	Ձեռքբերման նպատակը

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարար _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

14_1360

Ձև N 5

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի՝Ն ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ՝ 20___ ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի Դաշնության լիազորված կազմակերպություն (հայտատու, մատակարար)

_____

(անվանումը)

Հայաստանի Հանրապետության լիազորված կազմակերպություն (հայտատու, մատակարար)

_____

(անվանումը)

Պայմանագրի համարն ու ամսաթիվը	Գրանցման համարը և անվանացանկի քաղվածքի ամսաթիվը	Արտադրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Արժեքը	Կատարումը

Հայաստանի Հանրապետության
լիազորված կազմակերպության
ղեկավար

_____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

___ _____ 20 թ.

14_1360